ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ փետրվարի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 92 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր վաթսունյոթ, աշխատանքի տեղավորման միջնորդության համար՝ քսանհինգ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից հիսուներկուսին տրվել է դրական լուծում, տասնհինգ դիմում մերժվել է:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին մեկ դիմումի, քսանչորս դիմումներ վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ